ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հուլիսի 2014 թվականի թիվ 96 -Ա

ԿԱՐԵՆ ՆԱԶԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի <բ> կետով և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2004 թվականի մայիսի 31-ի <Ժամկետային աշխատանքային պայմանագիր կնքելու կարգը սահմանելու մասին> N 436-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 3-րդ կետի <դ> ենթակետով և 5-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի 2014 թվականի հուլիսի 17-ի N 01/13/5/2617-14 գրությունը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. ՀՀ Տավուշի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի /ծածկագիր՝ 70-2.1-5/ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար Կարեն Աշոտի Նազարյանի հետ 2014թ. հուլիսի 23-ից կնքել ժամկետային աշխատանքային պայմանագիր, մինչև մրցույթի արդյունքով թափուր պաշտոնը զբաղեցնելը:

2. «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի դրույթներին համապատասխան սահմանել դրույքաչափ՝ գլխավոր պաշտոնների առաջին ենթախմբի սանդղակի և աշխատավարձի 1-ին մակարդակի գործակցի /4.70/ կիրառմամբ՝ 310858 /երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ/ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2014թ.հուլիսի 23
ք.Իջևան